

## Իսլամից հրաժարվելու աղոթք

Ես հրաժարվում եմ Մուհամեդի սովորեցրած և ուսուցանած կեղծ հպատակությունից:

Ես մերժում եմ այն կեղծ հավատալիքը, թե Մուհամեդն Աստծո պատգամաբեր է:

Ես մերժում եմ այն կարծիքը, թե Ղուրանն Աստծո խոսքն է:

Ես մերժում եմ «շահադա»-ն և դրա ամեն խոսքը:

Ես մերժում եմ «ալ-ֆատիխա»-ն, մերժում եմ դրա այն խոսքերը, թե հրեաներն Աստծո բարկության տակ են, թե քրիստոնյաները մոլորված են:

Ես հրաժարվում եմ հրեաներին ասելու չեմ ընդունում այն պնդումը, թե նրանք խեղաթյուրել են Մուրբ գիրքը:

Ես հրաժարվում եմ այն պնդումից, թե իբր Աստված մերժել է հրեաներին, ես հոչակում եմ, որ դա սուտ է:

Ես հրաժարվում եմ Ղուրանն արտասանելուց և թույլ չեմ տալիս, որ այն իշխանություն ունենա իմ կյանքում:

Ես հրաժարվում եմ Մուհամեդի օրինակով արվող երկրպագության բոլոր կեղծ ձևերից:

Ես հրաժարվում եմ Աստծո մասին Մուհամեդի բերած կեղծ ուսմունքից և այն պնդումից, թե Ղուրանում ներկայացված Ալլահը Աստված է:

Ես հրաժարվում եմ թե՛ իմ անձնական կապից, որ նվիրաբերվել եմ իսլամին ի ծնե և թե՛ այն ժառանգական կապից, որ ստացել եմ իմ նախնիներից:

Ես հասկապես հրաժարվում եմ հետևել Մուհամեդի օրինակին ու մերժում եմ բռնությունը, վախը, ասելությունը, վիրավորանքը, խաբեությունը, գերակայության զգացումը, բռնաբարությունը, կանանց շահագործումը, գողությունն և Մուհամեդի գործած բոլոր մյուս մեղքերը:

Ես հրաժարվում եմ ամոթից ու հոչակում եմ, որ դատապարտություն չկա Քրիստոս Հիսուսի մեջ և որ Քրիստոսի արյունն ինձ մաքրում է ամեն ամոթից:

Ես հրաժարվում եմ իսլամի առաջացրած բոլոր վախերից: Ես Աստծուց ներողություն եմ խնդրում, որ իսլամի պատճառով իմ մեջ վախեր եմ ունեցել: Ես որոշում եմ ամեն պարագայում վստահել իմ Տեր Հիսուս Քրիստոսի Աստծուն և Հորը:

Ես Աստծո ներողությունն եմ խնդրում այն բոլոր արարքների համար, որ կատարել եմ՝ հետևելով Մուհամեդին՝ Ալլահի պատգամաբերին:

Ես մերժում եմ այն հայիոյախոսությունը, թե երբ Հիսուս վերադառնա, պիտի աշխարհի բոլոր մարդկանց ստիպի հետևելու Մուհամեդի «շարիաթ»-ին:

Ես որոշում եմ հետևելու միմիայն Քրիստոսին:

Ես դավանում եմ, որ Քրիստոս Աստծո Որդին է, որ խաչի վրա իմ մեղքերի համար է մահացել և իմ փրկության համար հարություն է առել: Ես Աստծուն փառք եմ տալիս Քրիստոսի խաչի համար և որոշում եմ իմ խաչն առնել ու նրա հետևից գնալ:

Ես դավանում եմ, որ Քրիստոս ամեն բանի Տերն է. նա իշխում է երկնքի ու երկրի վրա, նա իմ կյանքի Տերն է: Ես դավանում եմ, որ նա կրկին կգա՝ դատելու կենդանիներին ու մեռածներին: Ես հարում եմ Քրիստոսին ու հոչակում, որ երկնքում կամ երկրի վրա չկա ուրիշ անուն, որով ես կարող եմ փրկվել:

Ես խնդրում եմ, որ իմ Հայր Աստված ինձ նոր սիրտ տա, Քրիստոսի սիրտը տա՝ ուղղորդելու ինձ իմ բոլոր գործերում և խոսքում:

Ես մերժում եմ կեղծ պաշտամունքը և իմ մարմինը նվիրաբերում եմ կենդանի Աստծո պաշտամունքին՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու: